

**ՄԵԾԱՀԱՍՏԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾՐՆԹԱՑՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Կազմակերպություն՝	Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակ
Վայր՝	Երևան և մարզեր (Սյունիք, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք), ՀՀ
Տևողությունը՝	8 ամիս (ապրիլ-նոյեմբեր)
Դիմումների վերջնաժամկետ՝	05 մարտի, 2021
Դրույք՝	Ծառայությունների մատուցման

Առաջադրանքի ընդհանուր նկարագիր

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը, ելնելով մեծահասակների կրթության (այսուհետ՝ ՄԿ) կենտրոնների հետ աշխատանքի արդյունավետության բարձրացման և Հայաստանում ՄԿ պրակտիկայի խթանման ծրագրային նպատակներից, հայտարարում է հետազոտողի (հետազոտողների խմբի) մրցույթ, որի նպատակն է մշտադիտարկել աջակցվող ՄԿ կենտրոնների կողմից իրականացվող հիմնական գործառնությունները, այդ թվում՝ շահառուների կարիքների գնահատումը, ուսումնական գործընթացը իր բոլոր բաղադրիչներով, դասընթացավարների ներգրավումը, մասնագիտական զարգացումը և այլն: Մշտադիտարկման ընթացիկ և ամփոփիչ արդյունքների հիման վրա մշակվելու են ՄԿ համապատասխան գործառնությունների բարելավման առաջարկություններ:

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի մասին

Որպես մեծահասակների կրթության առաջատար մասնագիտական կառույց՝ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալն արդեն 50 տարի է, ինչ պարտավորություն է ստանձնել խթանելու շարունակական կրթությունը գրեթե 40 երկրներում՝ աջակցություն տրամադրելով մեծահասակների կրթություն իրականացնող կառույցների ստեղծմանը և զարգացմանը: Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը ֆինանսավորվում է Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության, Գերմանիայի արտաքին գործերի նախարարության, Եվրոպական միության, ինչպես նաև այլ դոնորների կողմից:

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի մասին

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը հիմնվել է 2002թ.-ին՝ դառնալով Հայաստանում մեծահասակների կրթության և ցկյանս ուսումնառության ներդրման և զարգացման առանցքային դերակատար: Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակն իր գործունեությունը ծավալում է եռամյա ծրագրերով՝ 3 մակարդակներով:

- Մակրո մակարդակ՝ ՄԿ ոլորտում քաղաքականության և համակարգային փոփոխություններ,
- Մեզո մակարդակ՝ կազմակերպությունների և մասնագետների կարողությունների զարգացում,
- Միկրո մակարդակ՝ մեծահասակների կրթության իրականացում Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի կողմից աջակցություն ստացող ՄԿ կենտրոններում:

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի Հայաստանյան գրասենյակն այսօր աջակցում է 4 մեծահասակների կրթության կենտրոնների.

- Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոն՝ 2014թ.-ից սկսած,
- Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմի Սոցիալ-կրթական կենտրոն (ներկայումս «Խաչմերուկ» կրթական խորհրդատվական կենտրոն- հիմնադրամ)՝ 2007 թ.-ից սկսած,
- Դիլիջանի համայնքային կենտրոն՝ 2021թ.-ից սկսած
- Մարտունու կանանց համայնքային խորհուրդ՝ 2021թ.-ից սկսած

Այդ աջակցության շրջանակներում վերոնշյալ կենտրոններին տրամադրվում է տարեկան ֆինանսավորում ոչ ֆորմալ կրթական ծրագրեր (մասնագիտական և փափուկ հմտությունների ուսուցման) և նախաձեռնություններ իրականացնելու նպատակով, ինչպես նաև իրականացվում է կենտրոնների աշխատակազմի և դասընթացավարների կարողությունների շարունակական զարգացում՝ դասընթացավարների դասընթացի (ToT), ուսումնական այցերի, մենթորական աջակցության, Մեծահասակների կրթության ցանցում ներառման և մասնակցության միջոցով:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նպատակ և խնդիրներ

Առաջադրանքի նպատակն է մշտադիտարկել վերոնշյալ 4 ՄԿ կենտրոնների կողմից իրականացվող հիմնական գործառույթները, այդ թվում՝ շահառուների կարիքների գնահատումը, ուսումնական գործընթացը իր բոլոր բաղադրիչներով, դասընթացավարների ներգրավումը, մասնագիտական զարգացումը և այլն:

Առաջադրանքի կոնկրետ խնդիրներն են.

- 1) ՄԿ կենտրոնների կողմից հավանական շահառուների կարիքների գնահատման և դրանց համապատասխան դասընթացներ մշակելու և իրականացնելու գործընթացների դիտարկում՝ մեծահասակների համար կենտրոնի կողմից իրականացվող կրթական ծրագրերի համատեքստում:
- 2) Ուսումնական/կրթական աշխատանքների/դասընթացների մշակումից մինչև հետադարձ կապ մասնակիցների/կառավարման, կազմակերպման և իրականացմանը առնչվող փաստաթղթերի, գործընթացների մշտադիտարկում:
- 3) Դասընթացավարների ներգրավման, կատարողականի գնահատման, կարողությունների զարգացման, հետադարձ կապի և այլ գործընթացների մշտադիտարկում:

4) Իրականացված մշտադիտարկումների արդյունքների փաստաթղթավորում, վերլուծություն և առաջարկությունների ներկայացում:

Աշխատանքի իրականացման ողջ ընթացքում ակնկալվում է սերտ համագործակցություն և մասնակցային աշխատանք ԴԻ-ՎԻ-ՎԻ Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի պատասխանատուների և ՄԿ կենտրոնների տնօրինության, մոնիթորինգի պատասխանատուների, դասընթացավարների հետ:

ԻՐԿԱՆԱՑՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ

Առաջադրանքն իրականացնելու համար նախատեսվում են այցելություններ ՄԿ կենտրոններ (յուրաքանչյուր կենտրոն առնվազն 2 անգամ): Առաջարկվում է կիրառել աշխատանքի հետևյալ մեթոդները.

- ՄԿ գործառույթներին վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրություն՝ կարիքի գնահատումից մինչև հետադարձ կապ:
- ՄԿ կենտրոնների կողմից իրականացվող դասընթացների դիտարկում՝ դասընթացների ծրագրերի պլանավորված և փաստացի իրականացման, ՄԿ մոտեցումների կիրառման համատեքստում, այդ թվում մոտիվացիա, մեթոդներ, գնահատում և այլն:
- ՄԿ կենտրոնների դասընթացավարների, թիրախ խմբերի հետ հարցազրույցներ կամ ֆոկուս խմբեր, որոնք առկա իրավիճակով պայմանավորված՝ կարող են իրականացվել առցանց:

Հիմնվելով առաջարկվող մոտեցումների և մեթոդների վրա՝ ընտրված հետազոտող/ները պետք է ներկայացնեն մանրամասն աշխատանքային մոտեցում /տե՛ս ստորև՝ կետ 2/, այդ թվում՝ մշտադիտարկման ձևաթղթեր, ֆոկուս խմբերի գործիքներ, այլ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. Պայմանագրի ստորագրում	ապրիլի 1
2. Աշխատանքային մոտեցման ներկայացում և վերջնականացում	ապրիլի 20
3. Ընդհանուր առցանց ծանոթացում կենտրոնների հետ	ապրիլի 20-30
4. Աշխատանքների իրականացում	մայիս-հոկտեմբեր
5. Միջանկյալ հաշվետվություն	հուլիս
6. Վերջնական հաշվետվություն	նոյեմբեր

Պատվիրատուն և փորձագետը միասին կմշակեն հաշվետվության բովանդակությանը և ձևաչափին ներկայացվող պահանջներ:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Մրցույթին կարող են դիմել ինչպես հետազոտողների խմբեր (առավելագույնը բաղկացած 2 անձից), այնպես էլ անհատ հետազոտողներ, որոնք բավարարում են ստորև ներկայացվող պահանջներին.

- Բարձրագույն կրթություն (կրթության, սոցիոլոգիայի, կառավարման, կամ հարակից այլ ոլորտներում),
- Կրթական ծրագրերի կառավարման, ուսումնական գործընթացների գնահատման, ՀԿ-ների հետ 3- 5 տարվա աշխատանքի փորձառություն:

Մեծահասակների կրթության ոլորտի հետ աշխատանքի փորձը կդիտվի որպես առավելություն:

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հայտերը պետք է ուղարկել հետևյալ հասցեներին՝ info@dvv-international.am, tadevosyan@dvv-international.am (թեմայի դաշտում նշել՝ «ՄԿ մշտադիտարկման առաջադրանք»), մինչև ս.թ. մարտի 05-ը՝ ներառելով.

- համառոտ ինքնակենսագրություն (CV),
- աշխատանքի իրականացման նախնական մոտեցում,
- նախկինում իրականացրած նմանատիպ առաջադրանքների հղում,
- մեկ օրվա համար ակնկալվող գումարի չափը (daily rate) և նախատեսվող օրերի քանակը: